

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մէկ ծառով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60 ծոյս
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցեման տողը
20 սանդիս



Rev. Père G.
le neasc
au Michitar's
ienne

Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԵՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄՆՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵԻ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

"Iravounk"

VARNA (Bulgarie)

Редакция

НА ВѢСТНИКЪ

"Иравункъ"

ВАРНА (България)

Գրոշքիւնք եւս

չեմ տրոշիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑՈՒՂՄԱՐԶ

Կերման նախարար կոմս Պիւլովի վերջերս վենետիկի և վիեննայի մէջ ունեցած տեսակցութիւնները Երեւակ Զինակցութեան վերանորոգման խնդրոյն վերաբերեցան. և այդ առթիւ եւրոպական թերթերը երկար խորհրդածութիւններ ընելով, թեր ու գէժ կարծիքներ յայտնեցին: Ոմանք Երեւակին վերանորոգումը անկարելի կը տեսնէին, աւարկելով թէ Գերմանիոյ մաքսային նոր օրինագիծը տնտեսապէս կռիւի կը մղէ այդ երեք պետութիւնները, ուստի չեն կրնար քաղաքականապէս միանալ: Ուրիշներ կըսէին թէ մաքսային այդ նոր օրինագիծը զուտ անտեսական խնդիր մը ըլլալով, երեք պետութիւնք իրենց մէջ կրնան փոխադարձ զիջողութեամբ զանի կարգադրել, որպէս զի աւագ կառուարութիւն ունեցող իրենց քաղաքական դիրքերը չը տկարացնեն. նոյնիսկ ըսողներ եղան թէ մաքսային նոր օրինագիծը առանց գոհացուցիչ կարգադրութեան իսկ բնաւ արգելք չը կրնար ըլլալ Երեւակին վերանորոգման: Կարգ մը թերթեր ալ պնդեցին թէ իտալիան Ֆրանսայի հետ վերջերս գոյացած համաձայնութեան հետեւանօք ալլելու չը կրնար Գերմանիոյ հետ զինակցել և այլն և այլն:

Սակայն լրագրական ու գիւտնադիտական այս բոլոր խորհրդածութիւնները ու կարծիքները իրենց ուժը կորսնցուցին Կոլոլիսովսքի վերջին ճառովը, զոր արտասանեց անցեալ օր Աւստրո-Հունգարիոյ պատգամաւորական ժողովին մէջ. Երեւակ Զինակցութեան վերանորոգման խնդրոյն առթիւ էն ակնարկեց Երեւակ Զինակցութիւնը պիտի նորոգուի և արդի դաշնագիրը պիտի պահուի: Կոմս Կոլոլիսովսքի իր ճառովը նաեւ ըսել ուզեց թէ իտալիոյ Ֆրանսայի հետ Միջերկրականի մասին համաձայնութիւն մը ունենալը Երեւակին միացումին չը վնասելէ զատ կը նպաստէ ալ:

Աւստրո-Հունգարիոյ արտաքին գործոց նախարարը Երեւակին սկզբնական կազմութեան միակ նպատակը Եւրոպայի խաղաղութեան պահպանումին վերաբերելէ զատ, Ֆրանսո-ուս գիւտնակցութիւնն ալ այդ նպատակով կազմուեցաւ, րաւ:

Արեւելքի խաղաղութիւնը պահպանելու խնդրոյն գալով, նախարար յիշեց 1897ի Աւստրո-ուս համաձայնութիւնն ալ, Պալատեան թերակղզւոյ մասին. և րաւ, այդ երկրին արկածախնդիր տարրերը՝ երբեմն վիեննայէ և երբեմն Ս. Բեդրսպուրկէ քաջալերութիւն գտնելով, որպէս զի չը վտանգեն ընդհանուր խաղաղութիւնը, 1897ին Ֆրանց Եօգէֆ կայսրը Չարին հետ համաձայնեցաւ Արեւելքի մէջ իրաց արդի վիճակը պահպանելու և այդ երկրներու իրենց վերաբերեալ ներքին գործերուն միջամտութենէ բոլորովին ձեռնպահ մնալու համար:

Կոլոլիսովսքի մասնաւորելով իր խօսքը Պուլկարիոյ և Սերպիոյ հետեւեալ խորհուրդը տուաւ:

«Սերպիան և Պուլկարիան, րաւ, բնաւ անհոգ գտնուելու չեն գրգռուած միտքերը հանգարտեցնելու համար: Այս երկու երկիրները, ամեն բանէ առաջ, ջանալու են ստնձ մը դնել խռովարար տարրերուն. որովհետեւ, ուրիշ կերպով, իրենք ալ պիտի կասկածուին իբր մեղսակից յանցաւորներ: Այս օրինակ վարմունք մը Եւրոպական շահերուն հակառակ ըլլալով, իրենց կորսնցնել կուտայ այն համակարանքը և բարեացակամութիւնը զոր Եւրոպա ունի իրենց նկատմամբ և անոնց իբր խաղաղասէր ու Պալատի կարգը պահպանող տարրեր նկատուելու մտահոլութիւնը կանհետացնէ: Անոնք ծուռ ընթացքներու հետեւելով, ի մէջ այլոց, իրենց ուժերը կը նուազեցնեն, որուն այնչափ պէտք ունին գլուխ հանելու համար իրենց զանազան գործերը և հաստատ հիմնուելու վրայ զետեղելու համար իրենց երկրին անկախութիւնը»:

ԳՈՒՐՊԷՅ

ԱՋԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՍԻԿԱՐԻ ԹՈՒՂԹԸ

Նախ համառօտիւ ի նպաստ Հիւանդանոցի սիկարի թղթի սկզբնաւորութեան վրայ խօսիմ: Ժամանակաւ Պ. Սամիկ Պարտիզպանեան, տպարանապետ ի Կ. Պոլիս, ի նպաստ Հիւանդանոցին սիկարի թղթի հրապարակ հանելու միջոցը յղացաւ: Սակայն ինչպէս իրողութեան կը տեսնուի, նա՛ այս գործին ինչ աստիճանի կարեւորութիւն ունեցած ըլլալը չկրցաւ ըմբռնել: Իր շահելիք գումարներէն Հիւանդանոցին հնչուն ստակ բաժին հանելու տեղ՝ ամեն ամիս մաս մը սիկարի թղթի կը նուիրէր: Հասարակութիւնը Պ. Սամիկ Պարտիզպանեանի ըրած անկարեւոր նպատակը լրագրաց մէջ կարգաւորով, չնչին շահով մը համար գինքը այնքան չխրախուսեց:

Պ. Ս. Երեւնեան անուն մի անձնաւորութիւն՝ 8-9 տարի առաջ Հոգաբարձութեան առաջարկեց 90 պրակ սիկարի թղթի պարունակող իւրաքանչիւր տուփի համար մէկ դրոշմ վճարել մզք: Հիւանդանոցին, պայմանաւ, որ Հոգաբարձութիւնը յանձնառու ըլլայ ժողովուրդին հրաւեր կարգաւ Հիւանդանոցին նպատակը այս թղթէն գործածելու: Հոգաբարձութեան պաշտօնական հրաւերները ըստ օրինի եղան, որոյ շնորհիւ Պ. Երեւնեան յաջողեցաւ 1894ին 43,971 տուփ սիկարի թղթի սպառելու: 1895ին այս գումարը բարձրացաւ 53,779 տուփի: այսինքն 10,000 տուփ աւելի սպառեցաւ: 1896ին Կ. Պոլսոյ առեւտրական հրապարակին անկեալ վիճակին հակառակ 57,249 տուփ եղաւ սպառուել, այսինքն 1895ի սպառումէն մօտաւորաբար 3,500 տուփ ալ աւելի: 1897ին սպառումը աւելի նուազեց 51,352 տուփ եւ 1898ին 44,227 տուփ: այս նուագումները աչքի զարնող բանք էին թէեւ, բայց 1899 տարուան նուագումը շատ աչքի զարկաւ: 1899ին միմիայն 23,715 տուփ սպառած ցոյց տրուեցաւ: մինչդեռ նոյն տարին Բարիդի արուեստահանդէսին պատճառաւ Պոլսոյ եւ գաւառներու մէջ առեւտրական հրապարակներուն վրայ մեծ ոգեւորութիւն կար:

Մեր ցոյց տուած վերագրեալ գումարներուն ճշգրտութեանը վրայ բնաւ տարակուսիլ պէտք չէ, որովհետեւ զանոնք հրապարակի վրայ գտնուած սիկարի թղթերուն մէջ պաշտօնապէս հրատարակուած գումարներէն օրինակած եմ:

Այժմ իմ նպատակս է հին վեց տար-

ուան գործառնութեանց վրայ պզտիկ ակնարկ մը ձգելէ ետքը, ծանրանալ մասնաւորապէս 1900 թուականէն ի վեր եղած գործողութեանց վրայ, այսինքն սիկարի թղթի մզք: սեփականութիւն հոյակապէն կը Հիւանդանոցի մէջ մեր որբերու կողմանէ պատրաստուելէ առջին: Այդ թուականէն սկսեալ հաշիւներուն վրայ խօսելէ առաջ, պէտք է սակայն նախ թղթի եւ գործարանական ընդհանուր հաշիւները աչքի առաջ ունենալ, որպէս զի կարելի ըլլայ ըմբռնել խնդրոյն կարեւորութիւնը ինչպէս նաեւ Հիւանդանոցի շահ եւ դէնք: Կրթութիւն չնրկաւորու համար, միայն հրապարակի վրայ էն շատ սպառած եւ պրակը 10 փարայ ծախուած տեսակին հաշիւը պիտի տամ Կ. Պոլսոյ անցուկ ստակի հաշուով:

Մէկ պալեայ Հիւանդանոցին գործածած թղթի 30ական ընդունոց, մինչեւ Պոլսոյ գործարանին գումար 800 դրոշմ վաճառք կըլլայ մաքսանոց: մէկ ընդ 480 թերթ է: Ըսել է մէկ պալեայ կարտադրէ, (մէկ պրակը 110 թերթնոց 90 պրակնոց) 200 տուփ:

Ամէն ոք գիտէ թէ, մէկ տուփը կը ծախուի 12 դրոշմ: Ըսել է մէկ պալեան կամ 200 տուփը 12 դրոշմ 2,400 դրոշմ կընէ:

Իսկ մէկ պալեան 200 տուփ սիկարի թղթի վերածելու համար ընդհանուր ծախքը ներկայացնեմ:

	Զուր:
Հիւանդանոցին գործածած մէկ պալեայ սիկարի թղթի կարծէ մաքսանոց	800
Մէկ պալեայ թղթէն արտադրուած 200 տուփերու կախարչի եւ կնքուելու ծախք	200
200 քարթօն տուփեր պատրաստելու	50
200 տուփերու երեսի էթիքէթին ծախք	15
200 տուփի գործաւորչէք, գործարանի վարձք եւ այլն	200
200 տուփին համար Պ. Երեւնեանի Հիւանդանոցին վճարած նպաստը	200
	1465
200 տուփ 12 դրոշմէն կը ծախուի	2400
Մեծաքանակ գնողին զեղչ եւ փոխադրողչէք 8 0/0 զեղչ	192
	2208
	1465
Երեւնեանի Զուտ շահը	743

Այժմ Հիւանդանոցի մէջ եւ մեր որբերու ձեռքով պատրաստուելով հաշիւները բոլորովին կը տարբերին: Նախ Հոգաբարձութիւնը, մէկ պալեայ

Թուղթը փոխանակ 800 զրույի 700 զրույի տարանջր քննելու ի ձեռին միջոցը ունի։ Երկրորդ, իւրաքանչիւր տուփի գործաւորը կը ստանայ ծախքերը կիջնեն միայն 60 զրույի, որ վարպետներուն կը վճարուի։ Երրորդ, Հիւանդանոցին վճարուած (տուփ գլուխ մէկ զրույէն) 200 զրույն ալ զեղչելով կը աւանդեն թէ մէկ պալեայ կամ 200 տուփ պատրաստուած սիկարի թուղթը Հիւանդանոցին վաճառք կըլլայ 1025 զրույի։ Իսկ ծախուած դիրք նոյնը կը մնայ, որ է 2208 զրույ, որով իւրաքանչիւր պալեայ շահ կը ձգէ 1183 զրույ։

Գալով սպառման քանակութեան, Պ. Շիրինեանի հաշիւներէն կը գրտնենք, որ օրը իրարու վրայ մէկ պալեայ ախտինքն 200 տուփ սիկարի թուղթ սպառած է։ Բայց անոր ժամանակն Հիւանդանոցի թուղթ գործածելու բարի վարժութիւնը այն աստիճանի ընդհանրացած չէր, որքան այսօր. փորձառար կըսեմ թէ՛ ոչ միայն հայ տարրը, այլ օտարազգիք անգամ գնահատելով մեր Հիւանդանոցի սիկարի թղթին ազնուութիւնը, սկսած են «Հասկանալէ քեզի» գործածել։ Արդէն տարակոյս չվերցնելով թէ ինչպէս ամեն գործ նոյնպէս եւ այս թուղթի գործը բարւօք, անխաղախ եւ կատարեալ աշխրջութեան չնորհիւ օրէ օր յառաջ կը ըլլայ։ Կատարած սպառումն ալ մեծ յառաջդիմութիւն ըրած կրնայ հաշուել, մասնաւոր Պոլսոյ կեդրոնէն հեռու ապրող Հայերը, որ դիւրութիւն չունին Հիւանդանոցին ու եւէ գումար նպաստ զրկելու, իրենց խիղճը հանգարտեցնելու համար անդադար Հիւանդանոցի թուղթ կը գործածեն, աւելի Հիւանդանոցին ուղղակի նպաստելու նպատակաւ։ Ժողովուրդը հաշուած է, որ վճարած 10 փարային մէջէն քանի մը բարանելով Հիւանդանոցին նպատած կըլլայ։ Ուրիշն միթէ չափազանցութիւն ըրած կըլլանք, երբ Շիրինեանի սպառած մէկ պալեայ թուղթին տեղ ալ մը 10 պալեայ օրական սպառում հաշուենք։ Բայց թողունք այս սպառման հաշիւը մէկ կողմ եւ իջնենք սպառման այն քանակութեան, ինչ որ Շիրինեան ըրած է, այն է մէկ պալեայ օրական։ Սակայն մենք ալ աւելի զեղչենք եւ հաշուենք ամիսը

միայն 24 պալեայ պալեայ գլուխ 1,183 զրույ շահէն կընէ ամսական 28,392 զրույ։ Արդ տեսնենք Հոգաբարձութեան պաշտօնական ծանուցումները ի՞նչ գումար կը հրատարակեն լրագրաց մէջ. «Յունուար ամսոյ մէջ ծախուած սիկարի թղթէն գոյացած գումար շահ 1350 զրույ եւ փետրուար ամսուան մէջ ծախուած սիկարի թղթէն գոյացած գումար շահ 1425 զրույ»։ Իմ ցոյց տուած հաշիւս եւ Հոգաբարձութեան հրատարակած հաշիւներուն մէջ այս ի՞նչ ահագին տարբերութիւն է. այս երկու հաշիւներէն ո՞րն է ճիշդը, եւ որն է սխալը։ Ես ալ ճիշդ ներկայ կարգացողներուն պէս շուարած մնացի ժամանակ մը, ուղեցի միտքս հանդարտեցնել, եւ դիմեցի թղթերու ծրարին, անգամ մը եւս հաշիւները մանրազնիւն աչքէ անցնելու համար, գտայ հետեւեալ հաշիւն ալ, որ նոյնութեամբ այստեղ կ'օրինակեմ։

1894ի Յնվ.ին	1573	տուփ	սպառած
» փոր.ին	2500	»	»
1895ի Յնվ.ին	3475	»	»
» փոր.ին	3100	»	»
1896ի Յնվ.ին	4223	»	»
» փոր.ին	3955	»	»
1897ի Յնվ.ին	4407	»	»
» փոր.ին	2525	»	»
1898ի Յնվ.ին	4350	»	»
» փոր.ին	3400	»	»
1899ի Յնվ.ին	1718	»	»
» փոր.ին	800(*)	»	»

Այս գումարներէն վեց տարուան Յունուար եւ Փետրուար ամիսներու միջին հաշիւը գտնելով, կը տեսնենք թէ Շիրինեան ամեն տարի այդ երկու ամիսներուն համար վրայ վրայ 6104 զրույ շահ տուած է Հիւանդանոցին։ Վերոյիշեալ հաշիւները նկատողութեան առնելով ինձ այնպէս կը թուի որ, իմ հաշիւներս ճիշդ են. քայց եթէ Հիւանդանոցի հաշիւները ճիշդ են, ուրիշն ի՞նչ հարկ կար այս թուղթը Հիւանդանոցի ՍեփԱ.Ա.Ն.Ո.Ի.Թ.Ի.Ն. հոշակել եւ մեր որբերը աշխատեցնել աւելի լաւ չէ՞ր ըլլար որբերը ուրիշ

(*) Այս վերջին տարւոյ հասոյթի նուազութիւնը արդէն զօրաւոր կաշկածներ յարոյց Շիրինեանի ուղղափառութեան գէ՞մ։

Դիս. Խմբ.

գործերու յոգնեցնել եւ աշխատանք շահէն աւելին ստանալ եւ կամ միայն ձեռագործութեան փոխարէն վարձք ստանալ, որ ցոյց տրուած աշխատանքին քանի մը պատիկը կընէ։

Մեր հաշիւներու իւրաքանչիւրին ճշգրտութեան հաստատ ապացոյցները ի ձեռն կան. միայն մէկ կէտը պատուաւոր տեսնուողութիւններու բերանացի տեղեկութիւններուն վրայ հիմնուած է, այն է Պ. Շիրինեանի տուփ գլուխ մէկ զրույ վճարած ըլլալու խնդիրը։

Արդ, ի սէր Ազգ. Հիւանդանոցի հազարաւոր անկախներուն, կը յուսանք որ բոլոր հայ հրապարակագիրներ արձագանք պիտի ըլլան այս խնդրոյն, եւ Ազգ. Պատրիարքարանը ինքզինք պարտաւոր պիտի գտնուի մանրակրկիտ քննութիւն մը ընելով զարժանն տնօրինելու եւ հրապարակաւ քաջատրութիւն տալով ժողովուրդին մտքերը հանդարտեցնելու։

Կ. Ն.

Վառնա, 2 Մայիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԵՐ ՄԱՍՆԱԴՐ ԹՂԹԱԿԵՆ)

ՍՕՖԻԱ, 2 Մայիս

Ասկէ քիչ ժամանակ առաջ խրեղիւր մը կը յուզուէր Պոլսոյ կրօնական ժողովոյ մէջ, այսինքն Պոլկորիոյ Առաջնորդութեան խնդիրը, որը սակայն, վիջուորութիւն մը չէ գտած։

Խորհրդը մեզ, Պոլկարահայոց համար մասնաւոր շահեկանութիւն ունենալով, յարմար կը գտնեմ երկու խօսք ընել այս մասին։ Ամեն բանէ առաջ կուզեմ մտածանիշ րնել մեր Պատրիարքարանին կամ Ազգ. Վարչութեան միշտ գտնաւոր, միշտ յետադիմական ու անհեռատես ընթացքը այս տեսակ պարագայներու մէջ։ Ըսուեցաւ թէ, Պոլկորիոյ եւ Ռուսմանիոյ համար առաջնորդ մը պիտի զրկէ Պատրիարքարանը։ Ասիկա շատ

անյարմար ու անգործնական բան մը պիտի ըլլար եւ այս պաշտօնով զրկուած առաջնորդէ մը ոչինչ օգուտ կարելի է յուսալ, քանի որ երկու երկրին ալ օրէնքները զատ, պէտքերը եւ պահանջները տարբեր են հիմնականապէս։ Ինչու. նիոյ համար առանձին առաջնորդութիւն մը հաստատել եւ Պոլկարիոյ համար ալ ուրիշ մը, շատ կարեւոր ու ստիպողական են։ Ու մենք կը զորոտանք թէ ի՞նչու ցարդ, այսչափ երկար տարիներ, Ռուսմանիոյ եւ Պոլկարիոյ, որոնք բաւականաթիւ հայութիւն մը կը պարունակեն իրենց մէջ, առաջինը մասնաւոր պատմական դարիւրէ ի վեր, զրկուած են իրենց հոգեւոր գլուխը կրող ներկայացուցիչը ունենալէ։ Եւ այս դատապարտելի անհոգութեան հետեւանքով չէ՞ որ կորսուած եւ միացած ալ կորսուելու վտանգին ենթարկուած հայութիւն մը ունի։ Ռուսմանիոյ մէջ, ի՞նչ կը նշանակէ 8—10 տարին անգամ մը ելնել սոսկ եկեղեցական մը իբր այցելու հովիւ զրկել այդ կարեւոր վարիւրը. եւ թող ներուի մեզ հարցնել թէ ի՞նչ նշանակելի օգուտ քաղած ենք այդ յիմարական ընթացքէն, իւթիւնեան եպիսկոպոս քանի տարիներ առաջ, հազիւ ոտքը Ռուսմանիոյ հողը դրած, դաւի մը հետեւանքով արտաքսուեցաւ. ալ մոռցուեցաւ։ Պարզեան վարդապետ, շուրջ երեք տարի առաջ Ալեքսիւ Հովիւ տիտղոսով Պոլկարիա զրկուեցաւ, եւ յիշուի, քաղաքներ այցելելէ զատ օգուտ մը չը տեսնէք։ Այժմ, Վահան վրդ. Յանուբեան, իբր Ալեքսիւ Հովիւ պիտի զրկուի, ըստ կարծեաց, ի Պոլկարիա, եւ չենք յուսար թէ նախորդինէն աւելի ազգային գործերը բարեւաւ գրուածեան վերածելու լաջողի։

Մեր խոնարհ կարծիքն է, մինչեւ որ Պատրիարքարանը Ռու-

Ա. ՇԻՐԻՆԵԱՆ (16)

ԹԻԱՊԱՐՏԸ
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՂԻՐ ԶԱԳՈ ԻՐ ԳԵՐԻՆ ՄԵՁ...

— Իրաւունք ունիք։ Բայց Մէլիք ի՞նչքան յիմար է եղեր որ ատանկ բաներու մէջ մտած է։ Գոնէ՛ յաջողեցա՞ւ։

— Զեմ գիտեր... միայն թէ կոտակած ունիմ մէկ երկու գեղերու վրայ։ Նայինք պիտի կրնամ հաստատել։

— Ինչպէ՞ս պիտի հաստատէք։

— Բաւական է որ փոքրիկ ապացոյց մը ունենամ ձեռքս։ Իսկոյն կատարուած թիւերը կերթամ կրմացուենմ։

— Կը յուսամ որ ատանկով պիտի կրնաք առաջն առնել։

— Հայ հայ... Ինչպէս որ խաղաղեցաւ գեղերնիս Մէլիք մը կորսնցու-

նելով, այնպէս ալ այդ գեղերը կը խաղաղին...

— Մէլիքէն յոյս չը կ'ալ կըսէք։

— Ամենիւրէն։ Անցեալ օր պէտք եղածները կատարութեան առջեւն ալ յայտնեցի։ Ամիս մը չանցած մահուան պիտի դատապարտեն։

— Հապա իր տունն ո՞վ պիտի նայի։

— Տունին մէջ աղջիկ մը եւ ցաւազար կին մը կը գտնուին։ Աղջիկը չափաւաս է։ Մանչ մը ունիմ, անոր հետ կը կարգիմ։ Ան տեսն ունեցածներն ինձի կը մնան, հայր սուրբ, աղէկ չէ՞։

— Աղէկ է... բաւական է որ նպատակիդ հասնիք։

— Ու վարդապետը լոց։ Հոգին լեցուած էր։ Իրեն անանկ կուգար որ իր գէմը գտնուող մարդը շունի մը նկարագրով ու մարդկային կերպարանով հրէ՛ ընէ մեք էր։

— Երթանք... միմիջեց վարդապետը։ Խոստովանութիւնդ վերջացաւ։

Գղիւրը չնշմարեց կզերականին հոգեկան աշխարհութիւնը։ Ոտքի ելաւ ու Եկեղեցիի տաճարին դէմ կենալով

աղօթեց վայրկ'ան մը... Եկեղեցի վարդապետէն բաժնուեցաւ։

Վարդապետը մինչեւ Եկեղեցիին դուռը գնաց անոր ետեւէն, երբ համոզուեցաւ որ մինակ էր Աստուծոյ տաճարին մէջ, ծուկիկ չոքեցաւ ու միմիջեց ինքնիրեն։

— Աստուած, Աստուած իմ, գուցէ առաջնորդէ՛ քայլերուս...

Ու հոգեբաւոյն աղօթքէ մը ետք, մեկնեցաւ Եկեղեցիէն։

Իրիկուն, երբ դարձեալ Գղիւր Զաքոյին տունն էր եւ անոր հետ սեղան նստած էր, չափազանց պաշարեւտութեամբ ու կեղծ մոեղութեամբ խօսեցաւ։ Փռճ տեղ Գղիւր յարգանքները աւելի կընէր, մեծարանքներ աւելի կը շալլէր, վարդապետը խորունկ մտաւորութեան մը մէջ կը թուէր ըլլալ, որուն պատճառը միայն Աստուած գիտէր։ Ծաղկն վերջը վարդապետին խորհրդով երկրասարք քաղաքային մեկնեցաւ, որպէս զի երկու օրէն վերադառնալով միասին բաժնուէին գեղէն։ Իսկ վարդապետը քննադատաւորապէս նայաւ անանկեցաւ։

Կէս գիշերուան մօտ էր։

Վարդապետը կամաց մը վեր առաւ

գլուխը, դուռին մօտեցաւ... ականջ դնելէ ետքը հասկցաւ որ տունին մէջ խոր լուսնի մը կը տիրէր։ Ուստի դուռը բացաւ ու անշուշտ կերպով մը Գղիւրին պատկած տեղը գնաց։ Գարշիկ մարդը կնոջ քովը կը գտնուէր։ Վայրկեան մը կանգ առաւ... մտածեց... Ի՞նչ ընէր... մտադրութիւնը կը կասեցնէր զինքը քայլ մը յառաջ առնելու... Եւ ստակային ճիգ մը ըրաւ մօտեցաւ անկողնին... գրպանէն բարակ չուան մը բարձին վրայ ինկած կնոջ վրէժէն անցուց թոյլ կերպով մը, եւ դաշտն մը՝ կուրծքին տակէն հանելով, Գղիւրին սիրտին տարաւ...

— Աստուած... միմիջեց վարդապետը։

Ու այնքան արագօրէն ու զօրաւոր կերպով դաշտնը դարկու Գղիւրի սրբտին մէջ, որ նոյն ժամուն դիւրութեամբ յաջողեցաւ կնոջ վրէժէն անցնելու ալ սեղմելու կնոջ ճիւղ խղզիլ։

Գաղտնիին հարուածը մահացու ըլլալով, վարդապետը չկրկնեց քայլ, այլ շուտով մը գոռոս ելաւ անկից ու գիշերուան մութիւն մէջ անյայտ եւ զաւ։

մանիոյ և Պուլկարիոյ, իրենց Պուլկարիոյ ունեցած ներկայացուցիչներու միջոցով, այդ կառավարութեանց հետ բանակցելով մէյմէկ պաշտօնական ու վաւերացուած Սաւա-նորդութիւն չը հաստատէ և կարող նշանաւոր, գործունէի և ազգա-սէր եկեղեցականներ չը դրկէ հովուելու համար այդ երեսէ ձգուած թեմերը, իրենց բնական երկրին օրէնքներու և պահանջներու համեմատ, մենք մօտ ապագային մէջ պէտք է Ռումանահայոց անհետացումը և կորուստը որքանք վերջնականապէս, իսկ Պուլկարահայութիւնն ալ շատ չը քչէր, կը տեսնէք, ի՞նչ ալ փոքր չարութիւններ, ինչ շաւիկներ պիտի փոխէ:

ԱՐՄԵՆԱԿ

ՏՊԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՄԻ ԱՍԹԻԻ

Պոլիսի 29 Ապրիլ

Անցեալ շաբաթ, ինչպէս Պուլկարիոյ ամեն քաղաքներ հոս ալ խանդավառ ոգեւորութեամբ տօնեցին Պուլկարաց Ամեն. Էկկարքին 25ամեակը, այն պաշտօնի եկեղեցականներ որ քաղաքը դարէ ի վեր կամքի զօրաւոր ճիգերով իր ամբողջ բարոյական ուժերը գործածեց իր սիրեցեալ ժողովրդին համար:

Հոս աւելորդ կը սեպեմ հանգիստի նկարագրութիւնը ընելու ու զբաղելու ազնիւ կղերին կեանքի մանրամասնութիւնովը, միայն այդ հանգիստի ու պուլկար ժողովրդին ոգեւորութեան իմ վրայ ազդած տխուր տպաւորութիւնը յուշագրելով, պիտի անցնիմ վարկեան մը զբաղելու սակայն մեր կղերին կեանքովը:

Կղեր ըսի, ու գաղափարներու զուգորդութեան օրէնքովը ակամայ մեր կղերը յիշեցի, մասնաւորապէս Պուլկարի հայ կղերը որուն

վերջերս մէկ քառասունի արարքը, չըսեմ ոճիրը, ամեն ջերմեռանդ ու ճշմարիտ հայու կրօնական զգացումները վերաբերեց, թէեւ ես, դժբաղդաբար Աստուծոյ Տան սուրբական յաճախողը չեմ, սակայն չեմ կրնար անտեսել հայ կղերին նուիրական պաշտօնը ու մեծ դերը որ ունի նա ու ազգամոյսի մը նախաձեռնարկութեամբ կուգան գինքը տեսնել հայ եկեղեցականութեան ճշմարիտ բարձունքին վրայ: Հետեւաբար այն սրտաբախ ցըն-ծումին արտայայտութիւնը՝ զոր գործնականօրէն ցոյց կուտար ութ տարեկան պուլկար մանչէն սկսեալ մինչեւ 88 տարեկան դառնաւ իր պաշտօնի եկեղեցականին նկատմամբ, ոչ միայն հիացումս ալ և նախաձեռնարկեց: Երբեք հոգեւոր միջոցաւ մայրկեան մը այս կղերները բաղդատութեան զննելու միտմունքիւն որ նկատեց, խորհրդածութեանս մէջ կը խորունկնայի երթալով մին կրօնի իբր իր կոչման գիտակցութիւնը բնեցող իր հաւատքի մարդը կը ծափահարուի այսօր ու նուիրական եկեղեցականութեան ամրապինդ թելերով կապած է ու կը կապէ զինքը իր ազգին ու եկեղեցիին հետ, մինչդեռ միւսը, ո՞վ ոճիր, կոյս աղջկան մը համեստութեան ու պատուի կապը կը ջանայ քակել անդին հռովմայական բարքերու ծայրագոյն ապականութեամբ իր հնչեղական քմահաճութեամբ իր հնչեղական քմահաճութեամբ իր հնչեղական քմահաճութեամբ:

Ո՞վ բարք, ո՞վ դարձ... Գրիչս առաջ չերթար այս անգամ երկար զրելու քեզ կը թողում ազնիւ ընթերցող այս երկու կղերներու ունեցած ահագին անլրպիտ տեսնելու ու ընտրելու պատիժը խաչը մութին մէջ տապալի տեղ գործածող այս կարգի անպատկառ եկեղեցականի դէմ:

ԱՐԱՄ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոնտոն հաստատուած Պատ. Թումանյանի որբանոցէն հեռացող երեք պատանիներ մեզ գրութիւն մը ղրկելով, կուգան բողոքել հրապարակաւ Թումանյանի դէմ, թէ նա պատանիներու անունը կը շահագործէ ու Պատանի թերթը միայն ինք խմբագրելով հանդերձ որբներուն կը վերագրէ: Ինչպէս որբները Պատանի մէջ տեսնուած պատուելիական ու միտքեղական յօդուածներուն բնաւ գաղափարաւոր չեն ևս, ինչպէս թէ սա ալ պէտք է աւելցնել թէ մեզ զոր. կուած գրութեան ստորագրութիւն, ներք թէ մեզ անձանթ են և թէ մէկ ձեռքէ ելած իր նմանին:

— Ուրէն Սիւրիան անուն թշկական ուսանողի մը Ֆրասայի մէջ իր կինը սպաննած ըլլալուն պատճառաւ դատի ենթարկուած լինելը գրած էինք: Էսք-Ուրէն գործակալութեան վերջին թղթակցութիւնէն կիմանանք թէ ոճրագործը դատապարտուած է 20 տարուան տաժանակիր աշխատութեան և 10 տարուան արգելքի: Երբեք պատժին առաջին 20 տարին լմնցնելէ յետոյ 10 տարի ալ չպիտի կրնայ ֆրանսական հողի վրայ ոտը դնել: Դատապարտեալն արդէն 35 տարեկան է:

— Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը պոչտօնագրով մը առաջարկած է Գաղ. Ժողովոյ, թէ սա ծանուցանէ որ ասկէ յետոյ յիմարներ կամ խենթեր չը ղրկուին Հիւանդանոց: Որովհետեւ զանոնք պատասպարելու համար տեղ չէ մնացած: Ժողովը նկատողութեան առնելով հոգաբարձութեան այս առաջարկը, հարկ չը տեսաւ այդ տեսակ ծանուցում մը ընելու, քանի որ արդէն որոշուած թիւէ մը աւելին

չընդունելու կարգադրութիւն կայ: Ուստի հարկ եղած միջոցները խորհիլ և գործադրել հոգաբարձութեան յանձնարարեց:

— Սօֆիայի նորընտիր թաղ. խորհրդոյ ընտրութեան տեղեկագիրը Գաղ. Ժողովը քննելով, օրինաւոր գտաւ և վաւերացուց:

— Աղէքսանդրիոյ թաղ. խորհրդոյ հրաժարման պատճառաւ, Պատրիարքը առժամայ թաղ. խորհուրդ մը կազմել որոշած ըլլալով, Գաղ. Ժողովը Պատրիարքի այդ որոշման իր հաւանութիւնը տուաւ:

— Նպաստից Բանձնաժողովոյ անդամները վերջին անգամ ալ իրենց հրաժարակտէր. Գեր. Ման. կուրի Սրբազանի միջոցաւ Պատ. Բարքի յանձնած են: Բառաշիկայ խառն Ժողովը այս խնդրով պիտի զբաղի:

— Հնչակեաններու Միութեան առթիւ Պոսթոնի և չրկայից Հնչակեան Սասնաճիւղերը մեծ հանդէս մը կը պատրաստեն: Հանգիստի պիտի մասնակցին օտարազգի նշանաւոր խօսողներ և քաղաքական անձնաւորութիւններ:

ԻՐԱՆԻՆԻՔ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Սարամպէյէն Ապրիլ 18 Թուակիր քարտ մը մեզ ղրկող ազգայինէն կը խնդրուի որ իր ստորագրութիւնը որոշ գրէ: Եւ կը յայտարարենք թէ Մարտ ամսոյ մէջ Սարամպէյ կայարանէն ապահովապէս նամակ ստացած չենք:

Տ. Մ. Գաւառեալուրեան, Շիգալիօ. — Ձեր ցոյց տուած հասցէին քաղաքի անունը կրկին անընթեան չէ: Ուստի կամ մաքուր եւ որոշ գրեցէք եւ կամ տպագրի ձեռով նշանակեցէք:

Թաղ. Խորհուրդ Շումլայի. — Տեղւոյ անձկութեան պատճառաւ յաջորդ թիւի յետաձգեցինք ձեր «Փաստեր կամ իրողութիւններ» յօդուածին հրատարակութիւնը:

Գրիչը սոսկալի շարժումներ ըրաւ: Բայց չկրցաւ ճշել: Իսկ կինը յաջողեցաւ վզէն անցուած չուանք քակել ու օգնութիւն, օգնութիւն պօսալ:

Անօգուտ բան. դաւաճանք. փչած էր իր հոգին... Իսկ Վարդապետը, որ մեր ծանօթ Վանականն էր, կրցած էր աղաւթէն փախչել:

ՎԱՆԻ ՓԱՇՏ

Ա... գեղին ոճիրը մինչեւ Վալի փաշային ականջը հասաւ: Գոռո՞ղ, հպարտ ու նենգամիտ փաշան պահ մը սարսափեց կեցած տեղը... մտածեց իր ընկերներն ու գործադրելիքներուն վրայ:

Երկու ամսուան մէջ իրարու ետեւէ պնդելի ոճիրներ կը գործուէին իր աչքին առաջը, իր սիրելի մարդոց արեւը կը թափուէր... անոնք անեւրեպ ձեռքի մը տակ կ'իյնային... ու ինքը չէր կրնար հանկուտ, չէր կրնար միջոց մը գտնել... բառին բովանդակ նշանակութեամբ անգոր էր: Եւ մանաւանդ, ամէնէն սոսկալին

այն էր որ՝ այդ աներեւոյթ ձեռքը յայտնի ու անվախ կերպով բանտի կը մտնէր եւ իրեն մեղսակից եղողները կը փախցնէր...

Վալին իր չքեղ ապարանքին մէջ կատաղութիւնէն կրակ կտրած սկսաւ ման գալ, սկսաւ իր բոլորտիքը նայիլ եւ անհանդարտ մտածումներով տոգորուիլ:

— Է՛հ, գնա՛ց Միրզա-պէկ, գնա՛ց Ռէս Զաքոն... ելաւ ձեռքէս սա չարագործ: Մէյքին ալ, բացառանչեց Վալի փաշան ինքնիշխան: Բայց ազատ է ան... ու դե՛ռ չուրջս կը դառնայ: Այս վերջին գաղափարը սոսկացուց զինքը: Ու գրեթէ ընկճուած, ջախջախեալ ու խռովայոյզ վիճակով մը ինկաւ բազմոցին վրայ ցաւագարի մը պէս:

Գառնող մը անցած էր, երբ ներս մտաւ փաշային թիկնապահ, Անմէտ պէյ: Մօտեցաւ անոր ու ձայն տուաւ: Վալին աչքերը բացաւ ու խղղուած ձայնով մը հարցուց.

— Ծեղեկութիւն մը հասա՞ծ է, Անմէտ պէյ:

— Ո՛չ, փաշա էֆէնտի, պատասխանեց թիկնապահ Անմէտ պէյ:

— Անօգուտ բան, ըսել է թէ կեանքերն իս վտանգի տակ է, մրմնջեց Վալին անհանդարտ ձայնով մը:

— Ի՞նչու կեանքերն իս վտանգի տակ ըլլայ:

— Վտանգի տակ չէ՞:

— Ամենեւին:

— Ինչպէ՞ս, ամենեւին: Չէ՞ք նայի: Միթէ՞ մեր աչքին առաջը չկատարուեցան ոճիրներ, միթէ՞ մեր բռնատէն չփախցուցին եղբունագործներ, միթէ՞ մեր շուրջը պահուած չեն այդ մարդիկ... Ի՞նչէն գիտէք որ վաղն ալ ուրիշ մը չպիտի իյնայ արեւոյ ձապաղիքներու մէջ... Ինչէն գիտէք որ դատարանութեան մը զոհը չպիտի ըլլանք մենք ալ... Ըստ իս, այնպէ՛ս համոզուած եմ որ այս ամբողջ նահանգը գաղտնի ականջներու վրայ հիմնուած է, մէկ խօսքով՝ գաղտնի շղթայի մը տակ աւելուած է...:

— Երբէ՞ք: Եթէ քանի մը հայերու արարչը տեղ տեղ կ'սկսածներ կուտան մեղի, ատելի բան մը չէ: Փառք Աստուծոյ, կրնանք անմիջապէս առաջըն առնել:

— Չեմ հաւատար, Անմէտ պէյ: Ես փորձառու եղած եմ: Գիտեմ թէ ժո-

ղովուրդ մը երբոր գլուխ վեցունէ կառավարութեան դէմ, բռնութիւնը, ուժը, մէկ խօսքով ամեն տեսակ ճնշումներ անօգուտ կը դառնան: Բիշ ժամանակուան մէջ չէ որ ուշադիր եղած եմ Հայերու ներկայ ընթացքին, դիտած եմ անոնց վարժարաններու մէջ տիրող ոգեւորութիւնն ու մանաւանդ տեսած եմ անոնց երիտասարդներու շարժումները: Ի՞նչ կը կարծէք, անա՛ այս բոլոր փոփոխութիւններն, այս բոլոր յեղաշրջումներն են որ ականջներ կը բանան մեր ոտքերուն տակ ու մեր հաւատարիմ պէկերը կ'իյնան իրարու ետեւէ մութին մէջ:

— Սա մեռած ժողովուրդէն կը յուսա՞ք այդքան մեծ գործեր:

— Մեռած... հը՛րմ, այդ ժողովուրդը մեռած չէ: Այդպէս մի՛ կարծէք: Եթէ այդ համոզումն ունեցած երբ մինչեւ ցարդ, կըսեմ որ չափազանց սխալած ենք: Այդ ժողովուրդը քիչ ատենուան մէջ մեր կառավարութեան դէմ պիտի տեսնենք ո՛չ թէ անպատրաստ, այլ ահագին ուժով:

(Շարունակելի)

ፆጉጉጉጉጉጉ

Իշպու խաթաճահէի թէկտիս
 Խէն էվոկի Կէօրկէվին իսմի
 Իէ թագտիս օլընմըլ տըր , խաս-
 թահանէնին 100 եսթաղը օլա-
 ճագ . ինյաւընա 400 պին ֆրանք

R N k U t U.

U C U C C

У ѿ Мъ ѿ Мъ

3 P U 7 U U

— Ինչեւի՞զ գրաւը Մարթիէիք

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՊՈՒՂՏԱՅ

Վահոն մ'ուամէլէսի ալթուն ֆը-
րանքլէ, արապա կիմիւլլէ: Նաթո-
լէօն 22:40 հիսապր իլէ:

የህ.ሆበኩቶ

ՍԱՐԲԱՅԻԹԷ

ጣሊያኛህሊኮፍኒ

ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻՄ —. 40

ՎԱՐԺԱՊԵՏ ԿՈՒԶՈՒԻ

Տօպրիշի Ազգ. վարժարանի ուսուցիչը հիւանդութեան պատճառաւ հրաժարած ըլլալով, այժմ տեղւոյ յարմար ուսուցիչ մը կուգո՞ւի։

Դիմել տեղւոյ հոգաբարձութեան։

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնել կոշիկներ որոնք իրենց վրա միացունեն ձեռքի դիմաց կունոթեան կատարելութիւն եւ մանաւանդ գին չափաւորութիւն, առանց վարանելոյ դիմեցէք Ս. Խորասանճեանի. Մուսլա, Տօքթ. Պատանոսիւի տան դիմաց:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна